ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/3

ք. Սիսիան 01-1-1-5713 «31» մարտ 2020թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի քարտուղար Վ. Միրաբյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Նորիկ Բունիաթյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է վարչական շենքերի տանիքների կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), և հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը կնքում, հաստատում է ստորագրությամբ:

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4896000 (չորս միլիոն հարյուր ինսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[19]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

---

[19] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

---

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սիսիանի համայնքապետարան	«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
ք. Սիսիան, Սիսական 31	ք. Արտաշատ Օգոստոսի 23փող. 21/3ա
ՀՀ ֆին. նախ. գործ. վարչ.	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900292141042	ՀՀ 1570061380420100
ՀՎՀՀ 09215978	ՀՎՀՀ 04234959
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Միրաբյան	Տնօրեն՝ Ն. Բունիաթյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«31» մարտ 2020թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200/16	**Տենիկական բնութագիրը ներկայացված է ստորև**	դրամ	1500000	1500000	1	ք. Սիսիան, Սիսական 31	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:
2	71241200/17	**Տենիկական բնութագիրը ներկայացված է ստորև**	դրամ	948000	948000	1	ք. Սիսիան, Սիսական 23	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:
3	71241200/18	**Տենիկական բնութագիրը ներկայացված է ստորև**	դրամ	948000	948000	1	ք. Սիսիան, Ն. Չարենցի5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:
4	71241200/19	**Տենիկական բնութագիրը ներկայացված է ստորև**	դրամ	1500000	1500000	1	Սիսիան համայնք, Որոտնավան բնակավայր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1: Սիսիան համայնքի Սիսական 31 հասցեի վարչական շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	
Նախատեսվող աշխատանքները	1. Փայտանյութի մասնակի փոխարինում նորով մոտ 6 խմ: 2. Ամբողջությամբ իրականացնել նոր տանիքածածկ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից մոտ 552 քմ: 3. Իրականացնել փայտյա կոնստրուկցիաների հրապաշտպանություն մոտ 15խմ: 4. Տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում ըստ ներկայումս գործող նորմերին համապատասխան մոտ 460 քմ: 5. Ջրհորդաններ պատրաստում 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից մոտ 120մ:

Կատարողին և նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ներկայացվող հիմնական պահանջները	Կատարողի հիմնական պարտականություններն են՝ Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: 1. Հետազննման աշխատանքների իրականացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն 2 մասից՝ 1. Ճարտարապետաշինարարական մաս. ներառում է ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր (հատակագիծ/անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն), տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա, տեխնիկական վիճակի հետազնության եզրակացություն (ըստ անհրաժեշտության), ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ, բացատրագրեր: 2. Նախահաշվային մաս՝ ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ, ծավալաթերթ-նախահաշիվ: Նախագիծը կազմվում է ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերին համապատասխան՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվություն) և դրան համապատասխան պատվիրատուի կողմից կազմված նախագծային առաջադրանքի հիման վրա: Նախահաշիվը կազմվում է ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: Կատարողը պարտավոր է՝ ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը, դ. պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային (4 օրինակ) և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը ներկայացնում է նաև քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացություն, որը պետք է լինի դրական:
Չափաբաժին 2: Սիսիան համայնքի Սիսական 23 հասցեի շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	
Նախատեսվող աշխատանքները	1. Փայտանյութի մասնակի փոխարինում նորով մոտ 2 խմ: 2. Ամբողջությամբ իրականացնել նոր տանիքածածկ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից մոտ 324 քմ: 3. Իրականացնել փայտյա կոնստրուկցիաների հրապաշտպանություն մոտ 11խմ: 4. Տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում ըստ ներկայումս գործող նորմերին համապատասխան մոտ 270քմ: 5. Ջրհորդաններ պատրաստում 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից մոտ 100 մ:
Կատարողին և նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ներկայացվող հիմնական	Կատարողի հիմնական պարտականություններն են՝ Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: 1. Հետազննման աշխատանքների իրականացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

պահանջները	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն 2 մասից՝ 1. Ճարտարապետաշինարարական մաս. ներառում է ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր (հատակագիծ/անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն), տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն (ըստ անհրաժեշտության), ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ, բացատրագրեր: 2. Նախահաշվային մաս՝ ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ, ծավալաթերթ-նախահաշիվ: Նախագիծը կազմվում է ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերին համապատասխան՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվություն) և դրան համապատասխան պատվիրատուի կողմից կազմված նախագծային առաջադրանքի հիման վրա: Նախահաշիվը կազմվում է ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: Կատարողը պարտավոր է՝ ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը, դ. պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային (4 օրինակ) և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը ներկայացնում է նաև քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացություն, որը պետք է լինի դրական:
Չափաբաժին 3: Սիսիան համայնքի Չարենցի 5 հասցեի շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	
Նախատեսվող աշխատանքները	1. Փայտանյութի մասնակի փոխարինում նորով մոտ 4 խմ: 2. Ամբողջությամբ իրականացնել նոր տանիքածածկ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից մոտ 300 քմ: 3. Իրականացնել փայտյա կոնստրուկցիաների հրապաշտպանություն մոտ 10 խմ: 4. Տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում ըստ ներկայումս գործող նորմերին համապատասխան մոտ 250 քմ: 5. Ջրհորդաններ պատրաստում 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից մոտ 100մ:
Կատարողին և նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ներկայացվող հիմնական պահանջները	Կատարողի հիմնական պարտականություններն են՝ Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: 1. Հետազննման աշխատանքների իրականացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն 2 մասից՝ 1. Ճարտարապետաշինարարական մաս. ներառում է ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր (հատակագիծ/անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն), տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն (ըստ անհրաժեշտության), ընդհանուր

	բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ, բացատրագրեր: 2. Նախահաշվային մաս՝ ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ, ծավալաթերթ-նախահաշիվ: Նախագիծը կազմվում է ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերին համապատասխան՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվություն) և դրան համապատասխան պատվիրատուի կողմից կազմված նախագծային առաջադրանքի հիման վրա: Նախահաշիվը կազմվում է ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: Կատարողը պարտավոր է՝ ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը, դ. պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային (4 օրինակ) և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը ներկայացնում է նաև քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացություն, որը պետք է լինի դրական:
Չափաբաժին 4: Որոտնավան բնակավայրի վարչական շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	
Նախատեսվող աշխատանքները	1. Փայտանյութի մասնակի փոխարինում նորով: 2. Ամբողջությամբ իրականացնել նոր տանիքաձածկ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից մոտ 660 քմ: 3. Իրականացնել փայտյա կոնստրուկցիաների հրապաշտպանություն: 4. Տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում ըստ ներկայումս գործող նորմերին համապատասխան: 5. Ջրհորդաններ պատրաստում 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից:
Կատարողին և նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ներկայացվող հիմնական պահանջները	Կատարողի հիմնական պարտականություններն են՝ Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: 1. Հետազոտման աշխատանքների իրականացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն 2 մասից՝ 1. Ճարտարապետաշինարարական մաս. ներառում է ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր (հատակագիծ/անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն), տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա, տեխնիկական վիճակի հետազոտության եզրակացություն (ըստ անհրաժեշտության), ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ, բացատրագրեր: 2. Նախահաշվային մաս՝ ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ, ծավալաթերթ-նախահաշիվ: Նախագիծը կազմվում է ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ

	հաստատված կարգով, ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերին համապատասխան՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (նախագծման թույլտվություն) և դրան համապատասխան պատվիրատուի կողմից կազմված նախագծային առաջադրանքի հիման վրա: Նախահաշիվը կազմվում է ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: Կատարողը պարտավոր է՝ ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը, դ. պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային (4 օրինակ) և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը ներկայացնում է նաև քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացություն, որը պետք է լինի դրական:

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սիսիանի համայնքապետարան	«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
ք. Սիսիան, Սիսական 31	ք. Արտաշատ Օգոստոսի 23փող. 21/3ա
ՀՀ ֆին. նախ. գործ. վարչ.	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900292141042	ՀՀ 1570061380420100
ՀՎՀՀ 09215978	ՀՎՀՀ 04234959
Աշխատակազմի քարտուղար _____ Վ. Միրաբյան (ստորագրություն)	Տնօրեն _____ Ն. Բունիաթյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«31» մարտ 2020թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/16	Սիսիան համայնքի Սիսական 31 հասցեի վարչական շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	-	-	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000
2	71241200/17	Սիսիան համայնքի Սիսական 23 հասցեի շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	-	-	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000

3	71241200/18	Սիսիան համայնքի Չարենցի 5 հասցեի շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	-	-	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000	948000
4	71241200/19	Որոտնավան բնակավայրի վարչական շենքի տանիքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	-	-	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնքապետարան
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ ֆին. նախ. գործ. վարչ.
ՀՎՀՀ 900292141042
ՀՎՀՀ 09215978

Աշխատակազմի
քարտուղար _____ Վ. Միրաբյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
ք. Արտաշատ Օգոստոսի 23փող. 21/3ա
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570061380420100
ՀՎՀՀ 04234959

Տնօրեն _____ Հ. Բունիաթյան
(ստորագրություն)

Կ.Տ